



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015

Էլ. փոստ suren.galstyan@justice.am

№ /12.1/8215-2021

«05» ապրիլ 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

(ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 112 սենյակ,
Հեռ.՝ 098606393, էլ. փոստ՝ prisonarmenia@gmail.com)

Հարգելի՛ պարոն Զայան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի մարտի 5-ին ՀՀ արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 21-10 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ [REDACTED] 2020 թվականի մայիսի 5-ից պահվում է նշված քրեակատարողական հիմնարկի բժշկական բաժանմունքում:

2021 թվականի փետրվարի 10-ին [REDACTED] առողջական վիճակի վատթարացման պատճառով նրան շտապօգնության մեքենայով տեղափոխել են «Վաղարշապատ» բժշկական կենտրոն: Առաջին բուժօգնությունը ցուցաբերվելուց հետո վերջինս վերադարձել է ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

[REDACTED] քրեակատարողական հիմնարկ վերադառնալու ժամանակ հերթափոխի ծառայողները խուզարկություն կատարելիս առաջնորդվել են բացառապես ՀՀ

արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանի հավելվածի 49-րդ, 52-րդ և 57-րդ կետերի պահանջով, վերջինիս նկատմամբ որևէ խտրական վերաբերմունք չի դրսևորվել:


ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Invalid signature

X 

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ 
ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական
և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչություն
Հեռ. (010)594024